

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոչկարիոյ համար 12 Ֆր.
Տարեկան 6 "
Վեցամսեայ 3 "
Արսասանականի համար տարեկան 15 "
Վեցամսեայ 8 "

Անկերկայի համար 3 Տր.
Տարեկան 1.50 "
Վեցամսեայ 0.75 "

Դանուցման տոյր սուս չին երեսին համար 40 ս
խալ շնորհի երեսին հա
մար 20 սանթիմ. Կ. Երե
յեկն անդի անգամներու
համար 20 0/0 զեղչ կըլ
լայ:

Վառնայի համար ձեռք 40 սանթիմ

ՉԱՐԹՈՒՄ

ՆԱԽԿԱԿ ԼԵ ՉՐԱՄ ՊԻԿԵ;
ԽԱՐԱԳՐՈՒՄ ԱՆՍ ԿԻՍ
ԳԻՒՆ

Redaction на вѣстникъ
"Шаржумъ"
Варна

Redaction du journal
"Charjoum"
Varna (Bulgarie)

Արսասանականի համար
ձեռք
( 20 ՍԱՆԹԻՄ )
Պոչկարիոյ համար
ձեռք
( 15 ՍԱՆԹԻՄ )

Գրութիւնք և չին տրուի

«ՇԱՐԹՈՒՄ»-Ի ԲԱՃԱՆՈՐԴ ԳՐՈՒՄԸ ԲԱՃԱՆՈՐԴ ՊԵՏՔ Է ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԷ

ՍԱՐՓԱՓԵԼԻ ԵՒ ԱՆԲԱՐՈՑԱԿԱՆ
ՍՈՍԵՒՄ

Մեզ լուր են հասնում, չը գի
տենք որքան ճիշտ են այդ լու
րերը, որ Հին Հնչակեանները
փորձել են Հմայակ Խուչիուլեան
նին սպանել, անցեալ օրն էլ լուր
տարածուեց որ Չիթչեանին սպա
նել են:

Եթէ այս լուրերը ճիշտ էլ չեն,
բայց և այնպէս փաստ են որ
Հնչակեանների մէջ ընկերասպա
նութիւնը սխալ էր վերածվելու
վրայ է, որովհետեւ այդ լուրե
րը Հնչակեան մի մասի հոգեկան
վիճակի և արամագրութեանց
արտայայտութիւն են ներկայա
նում:

Մենք վերակազմաւորներին հա
մակողմանի չենք, ընդհակա
ռակ մեր համակրութիւնը աւե
լի Հին Հնչակեանների կողմն էր,
որովհետեւ նրանցում աւելի յե
ղափոխական ոգի և անկեղծու
թիւն էինք նկատում:

Բայց այս օր եթէ իսկապէս
Հին Հնչակեանները ուղեւ են
իրենց երեկվան ընկերների
հակառակութիւնից ազատուել
միայն գէնք միջոցով, անկարող
ենք մեր զբաղանքը չուղեւ դե
պի ան մարդիկ, որոնք հայ
յեղափոխական կազմակերպու
թեան մէջ մտնում են այդպիսի
մի գաղանային և միեւնոյն ժա
մանակ ստոր սխալում:

Հասկանում ենք բոլր յեղափո
խականները սպանում են հայ
մատնիչներին, հայ գաւառներն
րին, թրքամոլներին, բայց չենք
ըմբռնում թէ ինչպէ՞ս կարելի է
սպանել Հմայակ Խուչիուլեանին,
Մխոին, Չիթչեանին և զբաղեց
նմաններին, որովհետեւ նրանք
Հին Հնչակեանների ներկայ վա
րիչներից տարբեր կերպով են
մտածում, թէ կուզ սխալ և կեղ
ծելով:

Եթէ հայ յեղափոխականները
պարտաւորված լինէին ընդ որ սոհ
պանողական հայերին սպանել, ո
րեմն հայութեան 95 տոկոսը

պէտք է սպանվէր հայի ձեռքով
իսկ մնացած չնչին տոկոսն էլ,
որ բաժանված է մի քանի յեղա
փոխական կազմակերպութիւննե
րի մէջ, տարբեր մտածելու և
գործելու պատճառով իրար պէտք
է կոտորէին:

Սարսափելի է և անբարոյական,
չէ՞. Անշուշտ մեզ հետ կը համա
ձայնեն բոլոր իրաւամբ ու լուրժ
մտածող հնչակեաններները:

Անցեալները բարեկամներին
մէկը պնդում էր որ վերջին 9ը
ամսվան ընթացքում հայ յեղա
փոխականները մտտ տասը հայ են
սպանել, և ոչ մի թուրք. ու
կազմած էր յայտնում որ եթէ
այսպէս շարունակվի, հայերը
թուրքին թողած, իրար պէտք է
կոտորեն, որովհետեւ հայ սպա
նելը իբրև աւելի դիւրին գործ
մի սովորութիւն պէտք է դառնայ
անբարոյականացած յեղափո
խական անհատների համար:

Արդա՞ր մեծ անկում, ամբողջ
հայութեան և հայ յեղափոխական
տարրի համար, եթէ այս սար
սափելի են թագորութիւնը նոյն
իսկ մասամբ իրականանայ:

Իսկ ոչ. անկարելի է որ հա
յը և հնչակեան երկու հատուծ
ները այդ հրեշտային վիճակին
սած լինին: Մենք հաւատում ենք
որ այդ երկու հատուծներին մէջ
էլ կան մարդիկ, որոնք կը վճռեն
ժամ առաջ վերջ դնել այդ եղ
բայրասպան և թէ հայութեանը,
թէ հայ յեղափոխականներին
անպատուաբեր սխալէմին:

ՎԱՐՈ

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ՁԵՅԹՈՒՆԻ ՀԱՍԱՐ

Գարրիէլ Ե. Պրովանտա, Սմթա
պետ Մ. Գո. Ներսէս Գիորգեան,
5-ական Ֆր. Եփրեմ Կարապետեան և
Ֆր. Ոնն, Երբեմ Համբարեան, Ոնն,
Մնաս Տաղանտեան, Սաշին փրկաֆեան
Գրիգոր Կարապետ, Յ. Պապանեան,
Պետրոս Սնկկեան, Յարութիւն և
Սաշիկ 3-ական Ֆր. Յակոբ Աճեմեան,
Յարութիւն Առաքէլեան, Յովհաննէս

Մրապեան, Յովհաննէս Եարաքեան,
Հատիկ Մուրատեան, Յարութիւն
Էդնեան, Եղիա Բարթողեան, Մար
կոս Ետեֆանեան, Նիկողոս Մա
յիլեանց, Միհրան Թաղաբեան,
Առաքէլ Ճանճուկեան, Գրիգոր Իս
կանեանեան, Բողա Կարապետեան,
Էրբեմ Դաւիթեան, Թաղէս Մինա
րէճեան, Սարսափ, Ասթաղի Գա
զարեան 2-ական Ֆր. Բ Պարսկեան,
Յովակիմ Փափագեան 1, 50-ական Ֆր.
Յովակիմ Տէրուսեան, Մարգարտ Մի
նասեան, Փելիպոս Փափագեան,
Յակոբ Պապանեան, Ոնն, Թորոս Պո
չեան, Գէորգ Ս. Յակոբեան, Ղ.
Ալէեան, Եսայի Յովակիմեան, Վաչան
Շալճեան, Ղազար Թումաճանեան,
Սըրակեանով Երջի Միհրան Պոտանեան,
Կայծակ, Գրիգոր Խարեհեան, Յա
րութիւն Պոտանեան, Սեդրակ Թու
մաճեան, Մկրտիչ Գարամանեան,
Տիգրան Մինասեան, Մեղրոն Պողո
սեան, Սմբատ Ալիուսեան, Յովհան
նէս Էրկանեան, Համբարձում Կարին
եան, Սարգիս Բարսեղեան, Սաշա
տուր Աւագեան, Սարգիս Յովհաննէս
եան, Օ. Մարտիկեան, Սրբուհի
Նիկողոսեան, Մարտիրոս Յակոբեան,
Վահրամ Պոտանեան, Թորոս Մանուկ
եան, Միսակ Յակոբեան, Թովմաս
Թորոսեան, Սաշիկ Յարութեանեան,
Մարտիրոս Նիկողոսեան, Մեղրոն
Հանրեճեան, Յակոբ Կարապետեան,
Ընկ. սրճարան, Մեղրոն Գարաբեան,
Սլ. Բարոնց Արմուղանեան, Ստե
փան Արշակունի 1-ական Ֆր. Կարա
պետ Պո. Գալը, Յարութիւն Յակոբ
եան, Գրիգոր Գարեգին, Մկրտիչ
Կրեղեան Միկայ ստուճի, Գրի
գոր Առաքէլեան, Կարապետ ճերմակ
եան, Գրիգոր Տիգրանեան, Միհրդատ
Հայրապետեան, Տիմոթէոս Կիրակոս
եան, Պետո, Կարապետ Եարաքեան,
Երուանդ խաղարոսեան, Եփրատ,
Թէօֆիլ Միխայիլով, 50-ական սթ.
Ոնն, Յարութիւն Միսակեան, 20-ա
կան սթ. Հատիկ առթիւ Էկեղեցւոյ
մէջ պնակի մը շրջակայութենէ գո
հացան 40 Ֆր. Աղբատախնամի գըն
ձանակի մի օրեայ շրջակայութենէ
գոհացած սոյն նպատակին հա
մար 21 Ֆր. 90 սթ.

2 մալիս թուականու ի' կ. Պոլիս
Պատրիարքարան խրկուած նպատա
կին գործածուելու համար 188 Ֆր.
Փոստի նամակագրոյ մի մանտաթի
և այլն ծախքեր 6 Ֆր. 80 սթ.
Գումար 194, 81
25 մայիս 1903
Պոլսէջ

ԹՈՎՄԱ ԴՊԻՆՊՈՎԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Անցեալ օր Սօֆիայի եկեղե
ցիներէրից մէկում հոգեհանգիստ
կատարվեց Մակեդոնացի նշանա
ւոր յեղափոխականներ՝ Դէլչեվի
և Թովմա Թափագովի համար:
Դէլչեվին, որը այնքան մեծ դեր
կատարեց մակեդոնական շար
ժուներին մէջ, չէ՞մ ճանաչում,
ուրեմն չեմ կարող իտեւել նրա
մասին. բայց Դափիգովին ճանա
չում եմ, և արդէն նիթէ մեր
ընթերցողները չեն մոռացել,
սոյն էջերի մէջ մի քիչ խօսել
եմ այդ համեստ, բայց բառի
բուն իմաստով հերոսի մասին,
և այսօր, երբ այդ յեղափոխա
կան բարձր տիպը այլևս չի ապ
րում, աւելորդ չեմ համարում մի
քանի խօսք ևս ստել, որ անկա
րելի էր ասել նրա կենդանի ժա
մանակ:

Դաւիգովը դեռատի հասակում
ականատես է եղել բուլղարական
յեղափոխութեան և սպասաճըու
թեան ու այն ժամանակվանից
սկսել է ասել թուրքերին և սի
րել ազատութիւնը:

Նա 18-19 տարեկան հասակում
մասնակցել է սերպ-բուլղարա
կան պատերազմին և փառաւոր
կերպով կատարել իր պարտքը
դէպի հայրենիքը 94-95 թուա
կաններին Մարաֆովի շեռ մտել
է Մակեդոնիա և բաւական քա
ջութիւններ գործել:

Սրանից երկու երեք տարի
առաջ նա Սարաֆովի նախագա
հութեան տակ եղած Բ. կոմիտէի
փոխ նախագահն էր, Սարաֆովի
ամենահաւատարիմ ընկերը, նրա
աջ թեքը, նրան ամբողջացնող, լրա
ցնողը: Արովհետեւ յախուռն Սա
րաֆովի մօտ հարկաւոր էր մի
հեղինակաւոր, յարգելի, ան
կեղծ, պաղարիւն և մտաւորա
պէս զօրեղ ընկեր. և այդ ընկերը
Դաւիգովն էր:

Դաւիգովը թէև լւր համես
տութեան պատճառով միշտ ըստ
ւերի մէջ էր մնում, բայց թէ

Սարաֆովը, թէ միւս ընկերները  
և թէ մօտիկ ծանօթները չէին  
ուրանում նրա առաջնակարգ յե-  
ղափոխական ուժ լինելը:

Սարաֆովը Դավիթովի Բարձր-  
կոմիտեի քանդակազարդ յետոյ,  
չնորհիւ ձերբակալութեան և  
դատավարութեան: Կազմվեց  
Միխայիլովսկի Յօնչէվի կօմի-  
տէն:

Յանկարծ պաշտելի դարձած  
Սարաֆովի և ընկերների մասին  
մէջ տեղ ընկան վարկարեկող լու-  
րեր և այնքան սաստկացան որ  
Բուլգարիայում մակեդոնական  
գործիչները երկու կուսակցու-  
թիւնների բաժանվեցին:

Բաժանումից յետոյ երկու կող-  
մից էլ պատերազմներ սկսեցին  
չըլաքայել Բուլգարիայում իրենց  
կուսակցութիւնը զօրեղացնելու  
նպատակով: Ահա այդ միջոցնե-  
րին վառնա եկաւ Դավիթովը Սա-  
րաֆովիստների կողմից: Մենք  
տեսնվեցինք իբրև հին և մտե-  
րիմ բարեկամներ, Դավիթովը ա-  
մենայն անկեղծութեամբ բա-  
ցեց իր սրտի վերքերը, որոնք  
առաջացել էին յեղափոխական  
գործի շուրջը դարձած ինտրիգ-  
ներից: Նրա նպատակն էր հրա-  
պարակով, լսարաններ կազմելով  
ժողովրդի առջև հերքել մութի  
մէջ պտըտվող վարկարեկող լու-  
րերը և Յօնչէվիստներին հրա-  
ւիրել թէ մի բան ունին ասե-  
լիք, որոշ, յայտնի հրապարակով  
և գէմ գիմաց յայտնեն:

Իմ հարցին՝ դրամական զեպում  
ների և գողութիւնների մասին,  
նա պատասխանեց:

— Այ զիջում և ոչ գողութիւն  
կայ, նախանձում են Բօրիսի ա-  
հագին ժողովրդականութեան և  
վախենում են մեր ուղղութիւն-  
նից:

Ու երբ նկատեցի թէ ինչու  
Բօրիսը արտասահման անցաւ,  
նա կրկին համեստութեամբ  
բայց բէխի սակից ծիծաղելով  
առարկեց:

— Չեմ կարծում թէ դուք էլ  
կարծէք որ Բօրիսը գործից փա-  
խաւ: Մենք նրան խորհուրդ  
տուինք առ այժմ արտասահ-  
ման հեռանալ, որովհետեւ եթէ  
մնար, կարող էր և կեռնքը վը-  
տանգվել: Նախանձողներ շատ  
ունի, ամեն կողմից: Համեստ  
սպայի ահագին ժողովուրդակա-  
նութիւնը տանել չեն կարողա-  
նում: Կարծում են որ նա Բուլ-  
գարիայում նոր Ստամբուլով պէտք  
է դառնայ, առանց այդ եզակի  
քաղաքական մարդի բարոյական  
պակասութիւնների: Եւ յետոյ  
մի քանի ամսվայ բանտային  
կեանքը առողջութիւնը բոլորո-  
վին քայքայել էր:

Վերջապէս նա դեռ շատ պէտք  
է մակեդոնական գործերի համար:  
Նրան պէտք է հեռու պահել այս  
տեսակ յուզող և կատաղեցնող  
չըլաններէր, իբրև յախուռն և  
սուպետական մարդ կարող է զոհ-  
վել զուր տեղը:

Այսպէս, մեր առաջին տեսակ-  
ցութեան միջոցին Դավիթովը  
միշտ Սարաֆովին էր բարձրաց-  
նում: Նրա բոլոր խօսքերի մէջ  
մի առանձին գուրդուրանք էր  
երեւում գէպի Սարաֆովը:  
(Շարունակելի)

ՅԻՒՊԻԻ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ ՆՈՒՐՉԸ

ՓՐՈՓՈՒՐԸ ՊԱՏԱՍԽԱՆ ԶԷ

Պ. Ականատես վկային գրուած-  
քէն յիշուած քանի մը կէտերը դուրս  
բերելէ եւ հոն ախրով ոգին ցոյց տա-  
լէ ետք, անցնիմ մատենագարան-ըն-  
թեցարանին:

Հոս սակայն ստիպուած եմ հարց-  
նելու թէ՛ մեր վկային գրածը  
ներկայ վարչութեան մասին ցաւ է,  
նախորդներուն թէ՛ ընդէ. ժողովու-  
րուն համար է, թէ ինծի համար:  
աս մասին կատարելաւ խառնակու-  
թիւն մըն է որ կը տիրէ իր գրուած-  
քին մէջ:

Ասոնց հետ մէկտեղ պիտի ջանամ  
զինքը գոհացնել:

Պէտք է ճշգրտել որ մատենագարան-  
ընթեցարանին գոյութիւնը՝ զայն  
հիմնողներուն պատիւ բերող գործ մը  
ըլլալը խոստովանած եմ, յիշած եմ  
նաեւ անոր ունեցած յաջողանցեալը:  
Եւ պ. հմեկեստ վկայն այ դրամ աւել-  
ցուցած գիրք բերուած շըլանները  
կրնայ յաջողը սկսել և գոյեքէն շա-  
տերը ծախել հարկադրուելին ալ  
անյաջողը: Որքոր կուզէ, աս մասին  
ազատ է:

Իրողութիւն է սակայն, որ մատե-  
նագարանը 97-98 թուականներուն

տարած վարժարաններէն մէկուն մէջ  
թիմուած էր և հազիւ 10-15 օրը  
անգամ մը քանի մը գիրք առնողներ  
կըլլային: Եւ ասի շատ զատուաբեր  
չէր բնականաբար գրասիրացին, ոչ  
ալ մատենագարանը իր օգտին ծա-  
ռայած կըլլար աս ընթացքով:

Նոյն ատ թուականներուն կազմ-  
ուեցաւ բուրժուական ընթերցարան  
մը. վերջը երկուքը միացան: Եւ Գր.,  
Եղբայրութեան մատենագարանը՝ միւս  
ընթերցարանին հետ փոխադրեցին  
եկեղեցիին կից շէնքը: Աս բանը ը-  
նդունելով, փառք Աստուծոյ, սկսեալ  
կուսած ազոյսները չէին, Ողբացեալ  
Սէրէմեանը ինքը գոյեքը շաղկաձ  
փոխադրած է: Պ. Թագուր Թաղոր-  
եանին, սպայ պ. Պողոսեանին զու-  
խար ողջ է. պ. Գաղազեան և ուրիշ  
շատ մը տեղացիներ սկիզբէն մինչեւ  
հիմա մէջն են:

Ընթերցարանի ամբողջ 2-8 տարի  
նոյն շէնքին մէջ շարժուան ամէն  
գիշերներն ալ բաց: Եւ պ. վկային  
զոյժած Ֆիլիպէցի երկասարդները  
կամ հայերը անչափ բացառութիւ-  
նը յարգելով— չի նայած որ ընթեր-  
ցարանը քովերին էր, չէին յաճա-  
խեր, Մինչեւ ձուլուակն մինչեւ  
հոն ուրիշներ կուգային: Ամէն պս-  
րաքայի մէջ, շատ-շատ անկեր  
կրնային սրբողած լլալ, ոչ թէ մա-  
տենագարանէն, անանկ չէ:

Ընթերցարան յաճախողներու և  
գիրք առնողներու թիւը գոհացուցիչ  
ըլլալէ հետէ էր: անպին եղաւ որ  
միայն կիրակի օրերը բացուեցաւ  
մատենագարան— ընթերցարանը և  
վարժարանն սնուցանուած ձեռքով:

Թողում գրասիրացի անդամները,  
հասարակութեան մէջէն ալ փախաք  
յայտնողներ եղան—նոյն իսկ պ. վը-  
կային արգարացուցած հարուստե-

ՍԵՄԻՆ ԱՌՁԵԻ

Տ. ԲՕԼԵԱՆՅԵՑ

Ձեզի, ազնիւ ընկերու-  
հիներս, Ս. Պ. Կուսի,  
Պ. Պաննի և թ. Ս. Կուսի  
Ա. Յ.

Ճաշէն յետոյ ժիվթային երեք բա-  
րեկամուհիները եկան: Եւ, սովո-  
րականին պէս, պարտէզին մէկ անկ-  
իւնը քաջուեցան մրմուռու ու խըն-  
դալու համար: Անոնց Սինիսթրիան  
էր այս տեղը, որ ուրիշ անուն կը  
կըրէր, ամբողջ սող մը Աղէքսանդ-  
րի չի վերջացած տաղերգութենէ,  
«հարիւրամեայ ընկուզենիի շուքին»

(\*) Տ. Բօլեանցի երիտասարդ, հզօր,  
սամակրելի ու եռանդոտ պուլկար  
պէլէթրիստ մըն է խորունկ գգացում-  
ներով, կեանքի լայն ու ժամանակա-  
կից ըմբռնումով, որու գրուածքին  
մէջ աղքատ ժողովուրդի լացը կը վե-  
րածուի հզօր բողոքի, իսկ տառա-  
պոզներուն արեւնոտ արցունքը՝ բար-  
ձր յեղափոխական գիտակցութեան:  
Անիկա առաջինն էր որ իր արուես-  
տագիտական գիտակցութեամբ ըմբռ-  
նեց ու նախաբանեց նոր, կենսական  
ու կազդուրիչ հոսանքը պուլկար գը-  
րականութեան մէջ, հոսանք որ  
հրեղէն խօսքով կ'երգէ թշուառին  
ցաւը, ազգատին տառապանքը, կա-  
րաստահարուածին հեծկտանքը, իր

տակ» և շփուանաւոր և միմաւոր էր  
այս անկերը.— սչ միայն մէկ սողի,  
այլ ամբողջ տաղերգութեան արժա-  
նի է. թող գրող նորընծայ բանաս-  
տեղծ ըլլայ, ինչպէս էր Ալեքսանտր  
կիմազիտի եթիմերորդ կարգի ա-  
շակերտ:

— Լայն գրասեղան մը, որու վրայ  
կային գրքեր, հանդէսներ հովէն  
բացուած թերթեր, շուրջը քանի մը  
աթոռ ու մօտերը տախտակէ նոտա-  
բան մը: Քովէն կը կարկաչեն երկու  
յատակ վաակներ, խոսարուն տակ,  
ձաղկներուն մէջ կը սողոսկեն օձա-  
ձեւ հոսանքներով— վերը սղպի երկ-  
նային կապոյտը իր ճակատը բարձ-  
րացուցած հարիւրամեայ ընկուզենի-  
ին» լայն տերեւները, ինչպէս կը-  
սէր տաղերգութիւնը:

Եղբայրներուն ու քուրբիներուն հատաչը՝  
ընտանիքի, տէրութեան, ընդհանուր  
անամբ արդի հասարակութեան լծի  
տակ, անթիօրերը անքուն գիշեր-  
ները... մէկ խօսքով անիկայ ներ-  
կայացուցիչն է գրականական այն  
հոսանքին որ «խոհեմ մարդիկներու»  
աչքին առջև, որոնց կեանքը մի-  
այն յօրանջումի մէջ կը կայանայ,  
«թէնոնցիոզ» անբարոյակունս կը-  
սուի: Անիկայ համատեղը ներկա  
յացուցիչն է վերածնող. կարող սւ  
գեղեցիկ բանարական դասակարգին  
Պուլկարիոյ մէջ: Երբ թարգմանու-  
թիւնը գլուխ մըն է անոր Ալթովայօր-  
ցիո (գաղափարի կուռղներ) վե-  
պէն:

Ծանօթօքիսն քարգիւնիչին

— Անպիտան Սթօյքան, ինչ զը-  
ւարթ ազլիկ, ինչ լայն սիրտ ունի  
— ըսաւ ժիվթային մայրը՝ ազլիկնե-  
րուն քրքիչները լսելով:

Իրօք Սթօյքան Սթօյլվան շարու-  
նակ կը ինդոցնէր ընկերուհիները:

Անիկա կարճահասակ, քիչ մը սը-  
գեղ էր, բայց անոր յաճախ թար-  
թող աչքերուն մէջ, արագ շարժում  
ներուն մէջ հրապուրիչ, համակրե-  
լի բան մը կար: Ամէնքն ալ զայն  
կը սիրէին, կատէին միայն անոնք,  
զորոնք ինքը կատէր ու երեսներ կը  
գարէր ասիկա: Անիկա կը ճանչնար  
շատ մարդիկ: Հինգ տարիէ իվեր  
գիւղացին ուսուցչուհի, գիւղէ գիւղ  
պտտած էր, շատ քայած, տեսած ու  
լսած, բայց լայն սիրտ ունէր, ինչ-  
պէս կը ըսէր պառաւ Ռատքովիցցան:  
Սթօյքան միշտ զուարթալով էր, ու  
խօսուն: Հակառակ պարագային մէջ  
միթէ կրնար այս հինգամեայ տա-  
ռապայից թափառական կեանքը կրել:

Անոր քովը նստած բարձրահասակ,  
գեղեցկադէմ, հրապալմ օրիորդը,  
Իրենա մատեցի Քիլիվան էր, քա-  
ղաքին մէջ կատավարական երկրորդ  
նեցուկի սղիկը: Անիկա բանտի մե-  
ջի պէս կապրէր. եւ ատեն ատեն պա-  
տէն ցատկելով ժիվթային տունը  
կանցնէր քանգատելու համար իր բա-  
րեկամուհիին ու գիրք մը առնելով  
կը վերադառնար գաղտնի կալիքու  
համար, Հոս կարծես ուրիշ արեւ կը  
փայլէր, օգն աւելի թեթեւ էր. Ի-  
րենա կը վերածնէր:

Երրորդ հիւրին անունը Մարիթա  
Մսօքովա էր, այս տարի աւարտած

կիմազիտի վիցերորդ կարգը: Մա-  
րիթա դժգոյն, նիհար, իր տարիե-  
րէն բանի մատաղ էր: Անիկա միայն  
մէկ բանի վրայ կը մտածէր, մէկ բա-  
նի վրայ կը խօսէր— Ռուսաստան եր-  
թալ, համալսարան ուսանելու: Բո-  
լոր ոտու ուսանողուհիները իրեն հա-  
մար սուրբ մարտիրոսուհիներ էին:  
Անիկա կը բաղձար անոնց պէս ու ա-  
նոնց հետ ապրիլ: ու այս պատճառով  
Աղէքսանդր զայն Կօժօյքա կանուա-  
նէր— և անիկա չէր սրբողեր. ընդ-  
հակառակը— հաճոյք կը գգար: Այս-  
պէս կատէր Բէթրբուպուրիի ուսանո-  
ղո հիւրերու կեանքէն քաղուած սու-  
սերէն մանրավէպի մը հերոսուհին:

Ազմուկը պահ մը զաղբիցաւ:  
Սթօյլվան սկսաւ պատմել թէ  
սասուն որ ստալ ուսուցչական հա-  
մաժողովն երթալով հանդիպել է իր  
երբեմնի մէկ պաշտնակիրուհիին՝ ալ  
ամուսնացած հարուստ ձեռնարկով  
մը հետ: Թէ հրաւիրուելով տունե-  
րին գացեր է, լաւ հիւրընկալուեր է  
եւ թէ էն վերջը հակացել է թէ ըն-  
րերուհին բնաւ գոհ չէ իր գիրքէն  
իր Սօֆիայի արկին:

— Իսկ ես ըսի իրեն, դուն չէիր  
խնդրեցող ամուսնաւորու համար, պի-  
տի ամուսնանամ ու պիտի ամուսնա-  
նամ... Բերելիք մէջ միշտ ասկա չէր  
իչնու կը գար դատիս, մանրածը  
կե՛ր:

— Ուե՛ղճը փոփոքաց Մարիթան ու  
աչքերը արցունքով լցեց եղան: — Բի-



ինչ աստիճանի հեղուկ կրնան  
դառնալ հայկական թոյլ ուղեղ-  
ները.....

ՔԱՅ ՆԱՄԱԿ

«... Խմբագրութիւն «Արշալոյս»-ի  
Գահիրէ

Շատ գով զգացի ինքզինքս՝ երէկ  
«Արշալոյս»-ը կարգաւորվ, որուն ազ-  
գային բաժնին մէջ այնքան ազնու-  
ւարար ծանուցած էիք Գահիրէ վե-  
րագարնս, Թանթաէն:

Ինձ պատիւ մըն է այս զոր ըրած  
էք ինձի, Պ. Խմբագիր, որուն թէ-  
պէտ քննաւ արժանանալու իրաւունք  
չունէի՝ իբր պարզ ու պարզասէր ան-  
հատ մը, անհասանելի յետինը չը-  
նեալու համար, բայց թէ կուսակէի  
որ ընէիք, իբր ընկերութեան մարդ  
ու, քիչ մըն ալ, եթէ կուզէք, իբր  
իր իննդութիւններովը եզրպատմա-  
նօթ ամսագոր-գրող:

Անկեղծ համարձակախօս ըլլալու  
համար պէտք է որ ըսեմ թէ՛ ցաւ,  
ցած եմ «Փիւնիկ»-ն, երբ այս պա-  
տիւը ինձի չըրաւ անցեալ տարի, Կը-  
րտսէ օգտախոսութեանս պահուն,  
մեկնումի ու վերագործի տաթիւ:

—Փառասկը է, պիտի ըսէք ՚հիմա  
Թերեւս:

Ինչ որ ըլլած, կուզեմ որ մամուլը  
այսուհետեւ այս պատիւ ընէ ինձի՝  
ինչպէս եւ անխորհրդէն բոլոր բարե-  
սիրական ընկերութիւններու լիա-  
գոյն ծառայողներուն, ամէն անգամ  
որ առիթը ներկայանայ, եւ ովքեր  
ալ ըլլան անոնք:

Մամուլը, այո՛, պէտք է որ այս  
յարգանքը մատուցանէ անկեղծ եւ  
անշահախնդիր գործիչներուն, այն-  
պէս ինչպէս որ կըլլուի կոր վահմա-  
շոյ՛: ազնուաշոյ՛ եւ մեծապատիւ  
գասակարգին, շատ անգամ սոսկ  
գրամուտն խաբարը համար:

Եւրոպական ընկերութիւններու  
մէջ, անձնուէր աշխատող մը կուրծ-  
քը պիտի անվրէպ օրին մէկը պատ-  
ւոյ խաչով մը պնդադարձուի: մեր  
մէջ, օ՛հ, Աստուած իմ մեր մէջ,  
Խնդով կը վարձատրուին կոր մեր  
խեղճ Խառն Յանձնաժողովին անը-  
ման անգամները, եթէ չէ Ս. Օ. ի մը  
անխիղճ նախատինքով, հալածանքով  
եւ կամ սրճարաններու քոխախառն  
երկտասարգութեան վրայ լալով ու  
ողբալով, այնչով վայելով...:

Ազգի մը յառաջդիմութեան նուր-  
բուած Բազմի մը գրիչը, բարեոք-  
րական նպատակի մը համար պատ-  
ուաւոր մը րացկանի մը քրտինքը շատ  
աւելի կարճեն՝ քան թէ ս եւ է հա-  
րուստի մը բունի կամ ինքնարուխ  
առատաձեւութիւնը, ինչ քանակով  
ալ:

Մեծ բան մըն է ուրիշին ինչ որ  
կը պահանջեմ կոր Ե. Օտեանէն ալ,  
ինձի եւ յարգելի ընկերակիցներուս  
ալ:

Եւ՛ այսպէս՝ «Մամուլ»-ն ա՛սալ եւ՛-  
մուն պատալ:

Օր մը խարդանել՝ օր մըն ալ չո-  
յելու համար, չէ՛ մի...:

Ընդունեցէք, Պ. Խմբագիր, յար-  
գանքներս ու՛ յանուն կարան-Ընթեր-  
ցարանի անկեղծ շնորհակալութիւնս:  
Ս. Օ.

Գահիրէ 29 Մայիս

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Մուշի փոխանորդ Խոսրով  
վարդապետի Պատրիարքարանի  
տուած տեղեկութիւններուն հա-  
մաձայն, Մալազկերտի երկրա-  
շարժէն 7 եկեղեցի, 4.500 տուն  
փլած են. 600է աւելի անձի կո-  
րուստ կայ. 2000է աւելի զանա-  
զան ընտանի կենդանիներ և մօտ  
2000 ոչխար ֆլաւաւած են: Ար-  
կածեալներուն մէջ կան նաեւ  
շատ մը հրեանոցներ և վիրաւոր-  
եալներ:

Փոխանորդը կը շնորհէ անմի-  
ջական օգնութեան պէտքը:

—Սրբաշու գալուց աւտորած  
հինգ Նիլիկեցի երկրասարդ  
հայրենիք պիտի վերագառնան  
ուսուցչութեամբ պարապելու:

ԹՈՒՐԿ-ՈՒՂԵՆԱՐԱՎԱԿԱՆ  
ՊԵՏԵՐԱՉՉՄ

Սելանիքէն «Փուռնալ» թեր-  
թին կը գրեն:

«Հոս ամենքն ալ՝ սպայ պաշ-  
տօնեայ, վաճառական, խմբա-  
գիրներ, պատերազմի մասին կը  
խօսին, միայն այստեղալիս է որ  
վերջ մը պիտի տայ այս անեղա-  
նելի կսցութեան:

«Մենք այս չարագուժ մարդու-  
րէութեանը պատասխանատու-  
թիւնը չենք ուզեր յանձն առնել,  
երանի թէ առանց պատերազմի  
գործերը կարգադրուէին, մենք  
կը հաղորդենք միայն հոնրային  
կարծիքը:

«Այժմ պետութիւններու չը մի-  
ջամտելը ապահովուած է: Բազ-  
մաթիւ թուրք զօրքեր Սելանիք  
կուզան փոքր Ասիայէն և իսկոյն  
կը մեկնին Մակեդոնիոյ ներսերը:  
Անձ մը որուն անունը չեմ ուզեր  
տալ, վստահեցուց որ թուրք զօր-  
քերուն կետրնացումը արդէն  
կատարուած իրողութիւն է:

«Թուրքերը Էտիքնէի քով ու-  
նին 100,000 զօրք որ կսպանւայ  
արեւելեան Ռումէլիոյ և Յիլի-  
պէին: Բոստանէնտիլի գրիմպը ու-  
նին 20,000 զօրք, արեւմտեան  
կողմը ունին 110,000 զօրք որ  
հաւաքուած է ալպանացիները  
զսպելու պատրուակով, բայց  
նպատակնէ պէտք եղած միջոցին  
յառաջանալ գէպի Սօֆիա:

«Իրապէս 2700,000 զօրք  
պատրաստ են Պուլկարիա մտնե-  
լու:

«Ռուսիոյ և Աւստրիոյ բուն  
նպատակը գաղտնիք կը մնայ:

Մակեդոնիան աւերուած է.  
հազարաւոր փախստականներ և  
բանտարկեալներ կան:

Ապտամները կործանարա-  
րութիւնը անոր մէջ կը կայանայ  
որ Մակեդոնիոյ մէջ կը գտնուի  
200000 շինուոր սրոնք իրենց  
տեղերը կայնած անգործ և ան-  
համբեր, կուզեն կամ տուններին

վերագառնուլ կամ թէ Պուլկարիոյ  
վրայ յարձակել:

Վայիէն մինչև գալթիէն զին-  
ւորէն մինչև զօրափարկսն որ  
թշնամին Պուլկարիան է:

Մակեդոնական շարիքը չպի-  
տի լմննայ մինչև որ թուրք զօր-  
քը Սօֆիա չը հասնի: այն Սօ-  
ֆիան, որ աղբիւրն է դաւադ-  
րութիւններու և ոսկէ կուզան  
հրոսախմբը և աուսրբը:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պուլկար թերթերը կը հաղոր-  
դեն որ Նաչովիչին Պուլոյ մէջ կա  
տարածներուն խոշոր մասը ան  
ծանօթ պիտի մնայ ժողովրդի  
լայն խաւերուն. ամենէն կարե-  
ւորը ան է որ լիւ սուլթանը և թէ  
իր նախարարները կը մտա-  
նեն թէ Խուրթիոյ և Պուլկարիոյ  
միջև եղած անհամաձայնութիւն-  
ները որչափ վտանգաւոր են և  
այս երկու պետութեանց համար,  
ատկէ միայն ուրիշները պիտի  
օգտուին:

«Սօֆիայի վէտոմոստի» թեր-  
թը կը հաղորդէ որ ստոյգ աղ-  
բիւրներէ իմացած է թէ զինու-  
որական ինքններ մը, հազարա-  
պետ Տօչեվ, քանի մը պատե-  
րազմական զապտնի ծրագրիներ  
ծախած է օտար կառավարութեան  
մը, որուն համար և արդէն  
ձերբակալուած է:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Գերմանական թերթ մը կը  
հաղորդէ որ սուլթանի գէմ դա-  
ւադրութիւն մը կազմուած է ե-  
ղեր պալատը գտնուող ալպանա-  
ցիներէ, բայց ժամանակին ի-  
մացուեր է:

—Սուլթանը Նաչովիչի յայ-  
տարարած է որ ինք ուսուստ-  
րիական ծրագրով որոշած բարե-  
նորոգումները պիտի մտցնէ Մա-  
կեդոնիոյ մէջ:

Ան տրամադիր է աւելին իսկ  
ընել, Մակեդոնիոյ մէջ խաղա-  
ղութիւնը վերահաստատելէն յե-  
տոյ մեծ վեզիրը Նաչովիչը կըր-  
կին Պուլիա հրաւիրած է, միայն  
երկու ամէն վերջը:

—Յայտնի է որ օտար պետու-  
թիւնները թուրք կառավարու-  
թիւնէն պահանջած են Սելանի-  
քի վերջին գէպերէն, հպա-  
տակներու կրած ֆլաններուն փո-  
խարժէքը:

Այժմ Թուրքիա կը մերժէ  
ֆրանսական կառավարութեան  
վճարել «Վիպտալիքի վր» շոգե-  
նաւին փոխարէնը, յայտարարե-  
լով որ թուրք իշխանութիւնները  
բոլորովին իրաւունք չունենալով  
բերական նաւերուն մէջ մտ-  
նալ, պատասխանատու չեն այդ-  
պիտի ֆլաններու համար:

ՍԵՐՊԻԱ

Բարիզէն հեռադիր մը կը հա-  
ղորդէ որ Խալիոյ նախաձեռնու-  
թեամբ չորս մեծ պետութիւննե-  
րը՝ Ֆրանսա, Անգլիա, Գերմա-  
նիա և Իտալիա Սերպիոյ ներկայ  
կառավարութիւնը չը պիտի  
ճանչնան մինչև որ յանցարո-  
նները պատմուին:

Անգլիական կառավարութիւնը  
իր յարաբերութիւնները խլած  
է Սերպիոյ հետ և իր դեօպուրե  
կուսչած է:

Սերպական մամուլը կատարած է  
բերական պետութիւններու  
գէմ և կը յայտարարէ որ անոնք  
իրաւունք չունին նոր թագաւորէն  
պահանջել որ ան դաւադիրները  
պատմէ, որովհետեւ գաւաղրու-  
թիւնը եղած է թագաւորին ընտ-  
րութիւնէն առաջ և ազգային ժո-  
ղովն ալ յանցարոնները ներած  
է:

—«Պաշտօնական թերթը» կը  
հաղորդէ որ Պէլկրատի սուսցես-  
պանը արտաքին գործոց նախա-  
րարին այցելութիւն տուեր է,  
սերպ կառավարութեան հետ պաշ-  
տօնական յարաբերութիւնները  
վերակսելու համար:

Բոզաքը կը պատրաստուի նոր  
թագաւորը ընդունելու համար:

—Հին պալատը, ուր եղեռնը  
կատարուեցաւ, հաւանորէն մուզե-  
ումի պիտի վերածուի, Թագա-  
ւորը այս օր Պէլկրատ պիտի հաս-  
նի:

ԹՈՒՐԿՈՆ «ՐԻԿԱ»

Նատեժտա հայ. գեր, խումբը  
համոզուելով որ պանսօմիական  
խաղերը գոհացում չհն կրնար  
տալ հայ ժողովրդին որոշած է  
այլեւս իր տրամադրական ներ-  
կայացումները տալ «Րիկայ»-  
թատրոնի մէջ, մէկ կողմ ձգելով  
բանտօմիականներու խումբը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կը խնդրենք մեր բաժանորդ-  
ներէն որ շտապին բաժնեգրիները  
վճարել:  
Ֆիլիպպի բաժանորդները կրնան  
բաժնեգրիները անմիջապէս  
յանձնել Տ. Անտօն Գօշի, որմէն  
կրնան ընդունիլ ընկալապի-  
րներ:

Խմբագրութիւն

ԶԵՅՈՒՆԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ  
Խմբագրութիւն Սիզօպօլէն  
Տիար Յովհաննէս Սարաֆիանէ  
ընդունեց տա՛ս ոսկի ֆրանք և  
երէք արծաթ լէֆ, ու յանձնեց  
թագական խորհուրդին:

Отговорникъ  
Мурадъ-Ераносянъ  
Печатница «Взаимность» Варна